Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամաբակ գյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար 4-րդ դասարանի (17 դասաժամ), դասվար 2-րդ դասարանի (20 դասաժամ), ֆիզկուլտուրա (11 դասաժամ), ՆԶՊ(2 դասաժամ), Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (4 դասաժամ), Կերպարվեստ (3 դասաժամ), Հայոց լեզու և Գրականություն (18 դասաժամ), երաժշտություն(3 դասաժամ), տեխնոլոգիա (1 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 16-ից մինչև սեպտեմբերի 27 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ սեպտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամաբակ գյուղի հիմնական դպրոցում, հասցե՝ գ. Գեղամաբակ, 4-րդ փող.,թ. 18: Տեղեկությունների համար զանգահարել (093) 841488 հեռախոսահամարով: